«Կորպորատիվ կառավարման արդյունավետ միջավայրը որպես կառուցողական կապիտալի ներգրավման պայման» հետազոտության համառոտագիր

Կառուցողական կապիտալի արդյունքը թափանցիկ, հաշվետու գործարար միջավայրի ձևավորումն է, կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, բարեվարքության մշակույթի տարածումը, բնապահպանական անվտանգությունը, շահակիցների ներառականության խթանումը: Կառուցողական կապիտալը նպաստում է հանրային բարիքի ձևավորմանը, այլ ոչ թե առանձին անձանց կամ առանձին խումբ անձանց կյանքի որակի բարձրացմանը:

Կառուցողական կապիտալի ներգրավման համար որոշիչ նշանակություն ունի ընկերությունների կորպորատիվ կառավարման որակը՝ լավ կառավարման հստակ և ամուր հանձնառության, պրոֆեսիոնալ և անկախ խորհրդի, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգի, շահակիցների իրավունքների պաշտպանության կառուցակարգերի առկայությունը և այլն:

Հաշվի առնելով կառուցողական կապիտալի և կորպորատիվ կառավարման կապը՝ «Կորպորատիվ կառավարման արդյունավետ միջավայրը որպես կառուցողական կապիտալի ներգրավման պայման» հետազոտության շրջանակներում նպատակ է դրվել՝

- ուսումնասիրել հայաստանյան ընկերությունների հակվածությունը դեպի կառուցողական կապիտալը,
- պարզել հայաստանյան ընկերությունների կորպորատիվ կառավարման առանձնահատկությունները,
- բացահայտել սեփական կորպորատիվ կառավարման համակարգի բարելավմանը միտված հայաստանյան ընկերությունների ջանքերը և նրանց ակնկալիքները պետությունից:

63 ընկերության հարցման միջոցով իրականացվել է նկարագրական հետազոտություն: Հարցումն անցկացվել է կիսաստանդարտացված հարցաթերթի միջոցով:

Հարցման հիմնական արդյունքներն են՝

- Հարցվածների զգալի մասը՝ կարևորելով ներգրավվող ներդրումների երկարաժամկետ բնույթը (71%), գնահատելով դրանց դրական ազդեցությունը շուկայի թափանցիկության, հաշվետվողականության վրա, արտահայտել է իր հակվածությունը դեպի կառուցողական կապիտալը:
- Հարցվածների 16%-ն է կողմ արտահայտվել կորոզիոն կամ քայքայող կապիտալի բնութագրիչներ ունեցող ներդրումներին, ընդ որում՝ հարցվածների 13%-ը երկրորդային է համարել ներդրումների երկարաժամկետ հետևանքները, իսկ 3%-ը գտել է, որ դրանք պետք է ծառայեն առանձին խումբ անձանց հարստացմանը:

- Սեփական բիզնեսի զարգացման համար հարցվածները կրկին կարևորել են կառուցողական կապիտալի նշանակությունը:
- Որպես ներդրումների ներգրավման խոչընդոտ հարցվածների գրեթե 3/4-ը դիտարկել է երկրի քաղաքական անկայունությունը, իսկ 80%-ը՝ տնտեսական քաղաքականության ձախողումները: Հարցվածները առանձնացրել են նաև կորպորատիվ կառավարման ոչ արդյունավետ միջավայրի խնդիրները. գործարար միջավայրում բարեվարքության մշակույթի պակասը (22%), կորպորատիվ կառավարման վերաբերյալ գիտելիքների պակասը (21%), ընկերությունների ոչ թափանցիկ և հաշվետվողական գործելաոճը (14%):
- Հարցվածները ներդրումների ներգրավման համար կարևորել են Հայաստանի հետ էմոցիոնալ կապերի դերը և գտել, որ Հայաստանի տնտեսությամբ կարող են հետաքրքրված լինել հայկական ծագում ունեցող արտասահմանյան ներդրողները (70%), ինչպես նաև տեղական ներդրողները (65%):
- Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը (95%) համաձայնվել է Համաշխարհային տնտեսական ֆորումի 2020թ.-ի մանիֆեստի հիմնադրույթին, համաձայն որի՝ ընկերությունների կատարողականը գնահատվում է ոչ միայն բաժնետերերին վճարվող շահույթով, այլև սոցիալական, բնապահպանական և պատշաճ կառավարման նպատակներին հասնելու նրանց կարողությամբ:
- Հարցվածների ընդամենը 1/3-ն է ծանոթ եղել ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին և ներկայացրել իրենց կողմից իրագործվող նպատակների բավական լայն սպեկտր՝ ընդգրկելով բոլոր 17 նպատակները:
- Հարցվածների ընկալումը կորպորատիվ կառավարման վերաբերյալ ընդգծված դրական է: Դրանց ընդամենը 3%-ն է գտել, որ կորպորատիվ կառավարումը լրացուցիչ գլխացավանք է ընկերությունների համար:
- Հարցվածները գիտակցում են իրենց կառավարման համակարգում բարելավումների անհրաժեշտությունը, սակայն կորպորատիվ կառավարման հանձնառության ստանձնմանը տվել են երկրորդային նշանակություն:
- Սեփական կորպորատիվ կառավարման համակարգի բարելավման հարցում հարցվածները ապավինել են պետական խրախուսող և աջակցող քաղաքականությանը. պետությունը պետք է խրախուսի ընկերությունների կորպորատիվ կառավարման որակի բարձրացմանը միտված ջանքերը (40%), օրենսդրական փոփոխություններով խթանի ընկերությունների թափանցիկությունը (27%), խստացնի իրավակիրարկումը (21%):

- Երկրի գործարար միջավայրի բարելավման և երկարաժամկետ ներդրումների հոսքը խթանելու համար հարցվածների ավելի քան 2/3-ը պետությունից ակնկալել է գործարար միջավայրում խաղի հավասար կանոնների ապահովում, գրեթե կեսը կողմ է արտահայտվել հարկային խթանող համակարգի ներդրման օգտին, իսկ 37%-ը այն կարծիքին է, որ պետությունը պետք է խրախուսի կորպորատիվ կառավարման արդյունավետ համակարգ ունեցող ընկերություններին:
- Կորպորատիվ կառավարման համակարգի բարելավմանը միտված բիզնեսի հավաքական գործողությունների անհրաժեշտությունը կարևորել է հարցվածների ճնշող մեծամասնությունը (95%):